

Նախաբան

Սույն տեղեկագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում պարենային ապահովության և աղքատության վերաբերյալ ամբողջական ու համապարփակ վիճակագրական տեղեկատվության ներկայացումն է:

Համաձայն 1996թ. Պարենի համաշխարհային գագաթաժողովի ընդունած Պարենի համաշխարհային ապահովության և գործողությունների պլանի հոռույան հոչակագրի՝ **պարենային ապահովությունը առկա է, երբ մարդիկ ունեն ֆիզիկական, սոցիալական և տնտեսական մատչելիություն՝ իրենց կարիքներին և նախասիրություններին համապատասխան ակտիվ և առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար պարենամթերքին:** Եվ հակառակը, **պարենային անապահովությունն առկա է, երբ մարդկանց համար ազատ մատչելի չեն աճի, զարգացման, ինչպես նաև ակտիվ ու առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար պարենամթերքը:**

Պարենային անապահովությունը կարող է պայմանավորված լինել պարենամթերքի բացակայությամբ, բնակչության անբավարար գնողունակությամբ և այլնով, որոնք հանդիսանում են նաև տնային տնտեսություններում պարենամթերքի անբավարար օգտագործման (թերսնում) հիմնական պատճառները: Պարենային անապահովությունը կարող է լինել քրոնիկ, սեզոնային կամ ժամանակավոր:

Պարենային ապահովության և անապահովության սահմանումները կարևոր են, քանի որ պարենով ապահովվածության վերլուծության անցկացման հիմնական նպատակը հանդիսանում է ոչ այնքան համապատասխան (ադեկվատ) սնվող մարդկանց որոշումը, այլ ավելի շատ բացահայտումը՝ թե **ովքեր, որ տնային տնտեսությունները և բնակչության որ խմբերը չեն ստանում բավարար քանակությամբ սնունդ և ինչ պատճառներով:**

Վերոնշյալ հարցերի պատասխանները հնարավորություն կտան ռազմավարություն մշակողներին գնահատել պարենային ապահովության իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև մշակել միջոցառումներ իրավիճակի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես՝ վերջինս իր արտացոլումն է գտել <<Կայուն զարգացման ծրագրում>> (ՀՀ կառավարության 30.10.2008թ., թիվ 1207-Ն որոշում), որի նպատակն է կրճատել աղքատությունը հանրապետությունում, ինչը ենթադրում է նաև պարենային ապահովության իրավիճակի բարելավում:

Տեղեկագրում պարենային անապահովության հիմնախնդիրները ներկայացված են հետևյալ կտրվածքով.

- **սոցիալ-տնտեսական վիճակ**, ինչը բնութագրում է պարենի առկայության, մատչելիության և օգտագործման (յուրացվելիության) իրավիճակը,

- **գներ և գների ինդեքսներ**, ինչը բնորոշում է պարենամթերքի սպառողական գների ու ինդեքսների հատվածով տնային տնտեսությունների գնողունակությունը, իսկ գյուղատնտեսական արտադրության միջոցների գների մասով՝ արտադրության խթանումը,

- **պարենի առկայություն**, ինչը բնորոշում է պարենի ֆիզիկական առկայությունը երկրում, անկախ այն բանից, թե դրանք ստացվել են արտադրության, պահուստների փոփոխության կամ արտահանման/ներմուծման ու մարդասիրական օգնության միջոցով: Պարենի առկայության վրա ազդող հիմնական գործոններ են գները, արտադրության և առևտրի խթանումը, արտադրական ենթակառուցվածքն ու բնակլիմայական պայմանները,

- **պարենի մատչելիություն**, ինչը բնորոշում է պարենային ապահովության և աղքատության փոխկապակցվածությունը, մասնավորապես՝ տնային տնտեսությունների և դրանց անդամների մոտ բավարար քանակությամբ ռեսուրսների առկայությունը, օգտագործվող պարենամթերքի կառուցվածքի համապատասխանությունը լիարժեք սնուցման պահանջներին և այլն: Պարենի մատչելիության վրա ներազդող գործոններից է նաև տնային տնտեսությունների տեղակայվածությունը և հասանելիությունը շուկաներին,

- **պարենի օգտագործումը (յուրացվելիությունը)**, ինչը բնորոշում է կենսաբանական և սոցիալական պայմաններին համապատասխան սննդի օգտագործումը:

Introduction

This bulletin aims to provide complete and comprehensive information on poverty and food security in the Republic of Armenia.

According to the Rome Declaration on World Food Security and Plan of Action accepted at the World Food Summit in 1996 *food security is achieved, if all people at all times, have physical, social and economic access to sufficient, safe and nutritious food which meets their dietary needs and food preferences for an active and healthy life.* By contrast, *food insecurity exists when people lack secure access to sufficient amount of safe and nutritious food for normal growth, development as well as for being active and healthy.*

Food insecurity could be conditioned by the unavailability of food, insufficient purchasing power of the population, etc., which are also the main causes for insufficient utilization of food (malnutrition) in the household. Food insecurity could be chronic, seasonal or transitory.

The definitions of food security and food insecurity are important, as the main objective of carrying out food security analysis is to determine not so much those, who are adequately nourished but to determine who, what types of households, what groups of population do not receive sufficient amount of food and why not.

Answers to these questions will allow strategy makers to evaluate the food security situation in the Republic, as well as to develop measures targeted at improving the situation. In particular, the latter has been reflected in the Sustainable Development Program Paper (GOA Decree No 1207 – Ն of 30.10.2008), which aims to reduce poverty in the Republic and which implies to improve the food security situation.

The key issues of food security presented in the bulletin are as follows:

- ***the social-economic environment***, which characterizes the situation with availability of food, its accessibility and utilization (consumption)
- ***prices and price indexes***, which characterize the purchasing power of households through consumer prices and price indexes of food products and the stimulation of production through the prices on the agricultural production means,
- ***availability of food***, which characterizes the physical availability of food in the country irrespective of whether it was received through production, change in stocks or exportation/importation and humanitarian assistance. Main factors influencing the availability of food are prices, development of production and trade, production infrastructure and the weather conditions.
- ***accessibility of food***, which characterizes the correlation between food security and poverty, and, particularly, the availability of sufficient quantity of resources at the households and for their members, correspondence of the structure of consumed food products with the requirements of adequate nutrition and etc. Another factor influencing accessibility of food is the location of households and their access to markets.
- ***utilization (consumption) of food***, which characterizes the use of food in compliance with biological and social conditions.